ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՊՀ պրոռեկտոր

Ռ. Հ. Բարխուդարյան

20.05.2024 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կարեն Սամվելի Բայրամյանի «Աշխարհիբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը» Է 00. 03. «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի մայիսի 20-ին նիստում քննարկվեց Կարեն Սամվելի Բայրամյանի «Աշխարհիբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը» աշխատանքը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Հ, Ավետիսյանը, ֆակուլտետի դեկան պ.գ.թ., դոցենտ Մ. Գաբրիելյանը, պ.գ. դ. պրոֆ. Ռ. Նահապետյանը, պ.գ.դ. Պավել Ավետիսյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Բոբոխյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Գնունին, պ.գ.թ., դոցենտ Հ. Հարությունյանը

Ելույթ ունեցան Հ. Ավետիսյանը, Ա. Գնունին, Մ. Գաբրիելյանը և Հ. Հարությունյանը: Նիստի մասնակիցները արձանագրում են հետևյալը.

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածից :

Աշխատանքը աչքի է ընկնում ինքնատիպությամբ, քանի որ հանդիսանալով պատմահնագիտական հետազոտություն, հիմնվելով արխիվային փաստաթղթերի վրա լուսաբանում է ականավոր հայ հնագետ Աշխարհիբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը: Պետք է նշել, որ հեղինակն ամբողջացնում է ոչ միայն արդեն հայտնի տեղեկությունները, այլև գիտական շրջանառության մեջ է մտցնում մի շարք նոր վավերագրեր Երևանի և Սանկտ-Պետերբուրգի արխիվներից: Մյուս կողմից հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա. Քալանթարի կողմից ուսումնասիրված և համապատասխան փաստաթղթերում արտացոլված մի շարք հուշարձաններ այսօր գոյություն չունեն, աշխատանքն ունի սկզբնաղբյուրի նշանակություն:

Ներածությունում հեղինակը արժևորում է Ա. Քալանթարի գործունեությունը, իրավացիորեն նշելով աշխատանքի արդիականությանն առնչվող հատվածում առաջին և երկրորդ հանրապետությունների ժամանակաշրջանում հուշարձանապահպանական գործունեության ուսումնասիրության կարևորությունը: Սույնով կարելի է ընդգծել, որ աշխատանքն ունի ոչ միայն տեսական-ակադեմիական, այլև գործնական կիրառական նշանակություն Հայաստանում հուշարձանապահպան գործունեուիթթյան հետագա կատարելագործման տեսակետից: Այս առումով հեղինակն իրավացորեն ընդգծում է աշխատանքի գիտական և գիտա-գործնական նշանակությունն արդի պայմաններում: Ներկայացված աշխատանքի գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ Ա. Քալանթարի կենսագրության, գիտական, մանկավարժական և գիտա-կազմակերպչական գործունեության մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա փորձ է արվում գիտականորեն շարադրել հնագետի հուշարձանապահպան գործունեությունը կոնկրետ պատմական ժամանակաշրջանի համատեքստում:

Ներածական հատվածը եզրափակում է աղբյուրների և գրականության տեսությունը: Որպես աշխատանքի շահեկան կողմ պետք է նշել, որ հեղինակն օգտագործված

գրականությունը և արխիվային փաստաթղթերը դասդասում է ըստ բնույթի, առանձնացնելով պետական նարմինների պաշտոնական փաստաթղթերը, պարբերական մամուլում հրապարակումները, հնագիտական աշխատությունները:

Առաջին գլուխը վերնագրված է «Աշխարհբեկ Քալանթարը հուշարձանների պահպանության ակունքներում»: Գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում դիտարկվում է Ա. Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը ցարական Ռուսաստանում: Բացի բուն հուշարձանապահպան գործունեությունից հեղինակը մանրամասն ներկայացնում է այդ ժամանակաշրջանի դաշտային գործունեությունը, մասնավորապես Մառի ղեկավարությամբ նրա աշխատանքներն Անիում և Իմիրզեկի հետազոտությունները: Հետաքրքիր է նաև Քալանթարի ազգաբանական հետազոտությունների մասին համառոտ ակնարկը: Արժեքավոր է հեղինակի անդրադարձը Անիի հնադարանի կազմակերպման գործում: Արժեքավոր է հեղինակի ակնարկն առ այն, որ Անիի հնադարանը նախատեսվում էր վերածել տարածաշրջանային թանգարանի: Առանձին ուշադրության է արժանի հեղինակի կողմից մանրամասն դիտարկվող Ա. Քալանթարի գործունեությունն Առաջին Աշխարհամարտի տարիներին: Հեղինակը ներկայացնում է ընթերցողին Քալանթարին ոչ միայն որպես խոշոր գիտնական, այլև հայրենասեր և մտավորական: Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը նվիրված է Ա. Քալանթարի գործունեությանն առաջին հանրապետության տարիներին: Ինքնին այս խնդիրը պատմագրության մեջ դեռևս անհրաժեշտ չափով չի լուսաբանված, ուստին աշխատանքում պարունակվող տեղեկությունները և վերլուծությունները ունեն կարևոր պատմագիտական նշանակություն: Մասնավորապես արժեքավոր է հեղինակի կողմից ներկայացված և վերլուծված հանրապետության տարածքը պատմա-հնագիտական շրջանների բաժանելու մասին Քալանթարի առաջարկը: Աշխատանքում վերլուծվում է նաև պատերազմական պայմաններում հուշարձանների պահպանությանն ուղղված Ա. Քալանթարի աշխատանքը:

Երկրորդ գլխում ներկայացվում է Ա. Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը Խորհրդային իշխանության առաջին տարիներին (1921-1924 թթ.): Գլխի առաջին ենթաբաժինը նվիրված է խորհրդային իշխանության առաջին տարիներին Քալանթարի գիտակազմակերպչական, գիտա-մանկավարժական և հնագիտական

գործունեությանը: Առանձնապես արժևորվում է ականավոր գիտնական հսկայածավալ աշխատանքը հնությունների կոմիտեի կազմակերպման և արդյունավետ աշխատանքի կազմակերպման առումով: Մեծապես արժևորվում է Քալանթարի գործունեությունը Անիի հնությունների փրկության և դրանց թանգարայնացման, ինչպես նաև Նոր Նախիջևանի թանգարանի նյութերի Հայաստան տեղափոխելու, հաշվառելու և թանգարայնացնելու ուղղությամբ: Հեղինակը հատուկ շեշտադրում է Քալանթարի գիտա-մանկավարժական գործունեությունը Երևանի պետական համալսարանում, մասնավորապես հնագիտության առաջին դասագրքի հրատարակումը: Ըստ պատշաճի արժևորվում է նաև Քալանթարի գործունեությունը հուշարձանների հաշվառման և ցուցակագրման համառոտ ծարագրի իրականացման ուղղությամբ: Երկրորդ ենթագլուխը նվիրված է 1920 թթ. Հնագիտական առավել հավակնոտ ձեռնարկին՝ Զվարթնոցի ուսումնասիրությանը, որտեղ ամբողջովին բացահայտվեցին Քալանթարի ունակությունները որպես հմուտ դաշտային հնագետ և կազմակերպիչ: Ուշադրության է արժանի Զվարթնոցում արգելոց-թանգարան ստեղծելու մտահաղացումը և փորձը:

Երրորդ գլուխը նվիրված է Ա. Քալանթարի հուշարձանապահպան գործունեությանը 1925-1936 թթ.: Գլուխը բաղկացած է երկու ենթաբաժնից. «Ա. Քալանթարի գործունեությունը «սցշինարարության» տարիներին» և «Ա. Քալանթարի պայքարը պատմամշակութային հուշարձանների պահպանության համար»: Առանձնահատուկ պոտք է նշել Ա. Թամանյանի և Քալանթարի համագործակցության համալիր ներկայացմանը: Ուսանելի է նաև հեղինակը կողմից մանրամասն ներկայացված Ա. Քալանթարի հուշարձանապահպան եռանդուն գործունեությունը Խորհրդային Միությունում ծավալված և պատմաճարտարապետական հուշարձանների անխնա ավերումով ուղեկցվող հակաեկեղեցական պայքարի տարիներին:

Աշխատանքի արժեքավոր հատվածներից է հավելվածը որտեղ զետեղված են մի շարք արժեքավոր փաստաթղթեր, որոնք տակավին անհայտ էին հանրությանը և առաջին անգամ շրջանառության մեջ են մտցվում հենց հեղինակի կողմից:

Այսքանով հանդերձ աշխատանքում առկա են մի շարք թերացումներ, որոնք բնավ չեն ստվերում հեղինակի կատարած ահռելի աշխատանքը:

Ա. Աշխատանքը մեծապես կշահեր, եթե հեղինակը կցեր նաև արխիվային լուսանկարներ, փաստաթղթերի լուսապատճեներ:

Բ. Կարելի էր կցել Ա. Քալանթարի կողմից հայտնաբերված և ուսումնասիրված հուշարձանների ցանկը, անդրադարձ կատարելով դրանց արդի վիճակին:

Գ. Շարադրանքում կարելի էր զուգորդել կենսագրական և տիպաբանական մեթոդը, ներկայացնելով Ա. Քալանթարի գործունեությունն ըստ առանձին ուղղությունների. Հնագիտական դաշտային (ներառյալ պեղումները և ուղեգծային արշավները), գիտական տեսական, գիտա-կազմակերպչական, գիտամանկավարժական:

Նշված թերացումները չեն նսեմացնում հեղինակի կատարած աշխատանքը, Ա, Քալանթարի գիտա-կազմակերպչական և գիտամանկավարժական աշխատանքի արժևորման ուղղությամբ: Ներկայացված ատենախոսությունը փաստորեն առաջինն է այս բնագավառում, ուստի Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն միջնորդում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի հնագիտություն և ազգագրություն 007 մասնագիտական խորհրդին շնորհել ատենախոսության հեղինակին հայցվող գիտական կոչումը:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ.՝ Հ. Գ. Ավետիսյան

Պ.գ. դ., պրոֆ. Հ. Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար, բ.գ.թ., դոց. Մ. Վ. Հովհաննիսյան

20.05.2024